ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԽՄԲՎԵԼՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ

Հունիսի 1-ին Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց եւ Շիրակի թեմերի Եկեղեցասեր երիտասարդաց միությունները արդեն երկրորդ անգամ հանդիպեցին Գուգարաց թեմում՝ Վանաձորում: Փոխայցելությունների շրջանակներում առաջին հանդիպումը տեղի էր ունեցել 2010 թ. նոյեմբերին Գյումրիում:

Թեմական առաջնորդների օրհնությամբ Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու դահլիճում տեղի ունեցավ «Ի սեր Աստծո, ի սեր հայրենիքի» վերտառությամբ եւ «Սուր եւ խաչ» խորագրված միջոցառումը: Գյումրեցի երիտասարդները ներկայացրին հայ հոգեւոր, ժողովրդական երգեր, եղան դուդուկով կատարումներ, իսկ վանաձորցիները «Մայիսյան հերոսամարտերի» մանրամասներով ներկայացրին հայրենասիրական, ռազմական երգեր, պատմեցին դրվագներ հերոսամարտից: Միջոցառմանը մասնակցեց նաեւ Գուգարաց թեմի մանկական երգչախումբը:

Հնչեցին կատարումներ Մակար Եկմալյանի, Կոմիտասի մշակումներից:

Միջոցառման ավարտին երկու թիմերն էլ պարգեւատրվեցին պատվոգրով, որ հանձնվեց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի եւ Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանի կողմից:

Սեպուհ սրբազանն իր օրհնանքի ու գոհունակության խոսքն ուղղեց երիտասարդներին՝ ասելով. *«Գնահատելի է ձեր աշխատանքը, սիրելի՛ երիտասարդներ, քանզի մենք ամենօրյա կարիքն ու պարտքն ունենք հիշելու մեր նախնյաց, անդրադառնալու մեր պատմության լուսավոր, մաքառումով լեցուն էջերին, մաքառումով ի գին մահվան, բայց որոնց շնորհիվ այսօր ունենք խաղաղ ապրելու, ստեղծագործելու հնարավորություն: Սիրելի՛ երիտասարդներ, ձեր արածը գովելի է, սակայն պետք է սրանով չբավարարվենք, պետք է ընդգրկենք ավելի լայն հատվածներ երիտասարդության՝ հասնելու նրան, որ յուրաքանչյուր հայի գավակ, յուրաքանչյուր երիտասարդ լինի եկեղեցասեր այնքան, որ առանձին երիտասարդաց միություններ ստեղծելու անհրաժեշտություն չունենանք ընդհանրապես. ամբողջանալ է պետք, գորանալ է պետք՝ ի պանծանս ազգիս հայոց, նրա հոգեւոր արժեքների: Ձեր մեջ տեսնում եմ այն շաղախը, որ Աստծո կամոք կարող է իրար կապել հայ երիտասարդներին՝ համախմբելով հայրենիքի եւ եկեղեցու շուրջ: Թո՛ղ ձեզ առաջնորդի հաղթանակներ կերտող միասնության այս գիտակցումը»:*

Երիտասարդներին օրհնանքի խոսք հղեց նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Տեր Միքայել եպս. Աջապահյանը. *«Շատ ուրախալի է, որ մեր երիտասարդները համագործակցում են, շփվում ազգային մշակույթի ծիրում, չնայած սա մեր երիտասարդության շատ փոքր մասն է, եւ այստեղ մտածելու բան բոլորս ունենք՝ համախմբվելու, ամբողջանալու առումով: Միջոցառումը գեղեցիկ հնարավորություն էր՝ ներկայանալու ասմունքի, երգեցողության միջոցով: Մարդն օժտված է խոսելու ունակությամբ, որով էլ տարբերվում է կենդանական աշխարհից, բայց սրանով չի բավարարվում մարդը. աղոթում է, աղոթքով էլ չբավարարվելով՝ երգում է, երգում հայրենիք: Մեր երիտասարդները, համաձայնեցված, թե իրարից անկախ, միջոցառումը կազմակերպելիս շեշտը դրել են հայի ինքնության խարսխի վրա՝ ասա-*

վածսիրություն եւ հայրենասիրություն: Ահա այս երկուսն է, որ համապեղելով՝ ունեցել ենք գովերգման արժանի հերոսամարտեր: Հայն առանց այս երկուսի համապեղման՝ դկար է: Օրհնում եմ ձեզ, եղեք ավելի գործունյա, ավելի աշխատասեր ու միասնական, իսկ մեր օրհնությունն ու աջակցությունը կունենաք միշտ»:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 2-ին, Փրկչի Համբարձման տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը կատարեց քահանայական ձեռնադրություն եւ օծում:

Պատարագիչ Հովակիմ Սրբազանը քահանայության կոչեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի յոթ սարկավագների. Ս. Մյուռոնով օծելով նորընծաների ճակատներն ու ձեռքերը՝ նրանց շնորհեց հոգեւոր նոր անուններ: Դարեն սարկավագ Անանյանը վերակոչվեց Տ. Զաքարիա քահանա, Արթուր սարկավագ Տիգրանյանը՝ Տ. Կոմիտաս քահանա, Համլետ սարկավագ Մովսիսյանը՝ Տ. Սիմեոն քահանա, Արմեն սարկավագ Սողոյանը՝ Տ. Մերուժան քահանա, Արթուր սարկավագ Հովհաննիսյանը ՝ Տ. Ստեփաննոս քահանա, Սուրեն սարկավագ Արաբյանը՝ Տ. Համբարձում քահանա, Էմին սարկավագ Խաչատրյանը՝ Տ. Թովմա քահանա:

Ավարտելով հընթացս Պատարագի կատարվող ձեռնադրության կարգը՝ Սրբազան Հայրը դիմեց նորընծա քահանաներին՝ շնորհավորելով ձեռնադրության շնորհին արժանանալու առիթով: «Այսօր ծնվեցին յոթ սպասավորներ մեր Ս. Եկեղեցու: Նրանք դարձան քահանաներ եւ Աստծո հոգին՝ Ս. Մյուռոնի դրոշմամբ, իջավ նրանց վրա: Նրանք կոչվեցին ծառայելու, Ս. Գիրքը քարոզելու, օժանդակելու բոլոր կարոտյալներին, մարդկանց մեջ սերը զորացնելու եւ դառնալու աղն ու լույսն այս աշխարհի, որի մասին մեր Տեր Հիսուս Քրիստոս խոսում է Ավետարանում: Այս տոնական օրը աղոթենք եւ մաղթենք, որ հայրերի ոգին, որոնց անունները ստացան այս քահանա հայրերը, միշտ նորոգի եւ ներշնչի նրանց՝ իրենց կյանքը զոհաբերելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու մեր ժողովրդին», - նշեց Սրբազանն իր խոսքում: Իր քարոզում Հովակիմ Սրբազանը նաեւ անդրադարձավ եկեղեցականի կոչմանը եւ կարեւոր առաքելությանը՝ պատգամելով քահանաներին իրենց հեստագա ծառայության վայրերում ամրապնդել հայորդիների հավատը, վառ պահել նրանց սրտում սերը մեր Եկեղեցու հանդեպ, սերը ազգային արժեքների ու ավանդույթների հանդեպ:

Համբարձման տոնին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է նաեւ 1441թ. Հայոց Հայրապետական Աթոռի՝ Սսից Ս. Էջմիածին փոխադրության հիշատակը: Այս առիթով Ս. Պատարագի ընթացքում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք: Հոգեւորականաց դասը եւ ներկա ժողովուրդն աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ առաքելահիմն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ լուսավորչահաստատ Հայրապետական Ս. Աթոռի անսասանության եւ պայծառության համար:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաեւ վեղարի տվչության արարողություն: Նորընծաներից Տ. Համբարձում եւ Տ. Թովմա քահանաները վեղար ստա-

ցան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը: Արարողությունից հետո նորաօծ եկեղեցականներին Վեհարանում ընդունեց եւ իր հայրական պատգամն ու օրհնությունը բաշխեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունիսի 3-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակյանին, որ Հայաստան է ժամանել Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի անդրանիկ նիստի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ժողովի առիթով:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը ողջունեց ՀԲԸՄ նախագահի այցը Հայրենիք եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ապա Նորին Սրբությունը եւ տիար Պերճ Սեդրակյանը քննարկեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կողմից իրականացվող համատեղ կրթադաստիարակչական, ընկերային, եկեղեցաշինական տարբեր ծրագրերի ընթացքը: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ՀԲԸՄ նախագահին Միության անդամների կողմից Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին մշտապես ցուցաբերվող սրտաբուխ եւ նվիրյալ զորակցության համար: Իր հերթին տիար Պերճ Սեդրակյանը մեծապես կարեւորեց Հայ Եկեղեցու եւ ՀԲԸՄ շարունակական եւ արդյունաշատ գործակցությունը՝ ի բարօրություն Հայրենիքի, աշխարհասփյուռ հայ ժողովրդի եւ ի պայծառություն Ս. Եկեղեցու՝ վստահեցնելով, որ Միությունը պիտի շարունակի իր նպաստը բերել Հայ Եկեղեցու առաքելության արդյունավետ իրագործմանը եւ ազգապահպան տարբեր ծրագրերին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Հարավային Ամերիկա կատարած հովվապետական այցի մանրամասներին, ինչպես նաեւ թեմերի եւ Հարավային Ամերիկայի հայաշատ համայնքների կյանքը հուզող խնդիրներին: Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց նաեւ, որ Արգենտինա այցի շրջանակներում մասնակցել է ՀԲԸՄ Բուենոս Այրեսի մասնաճյուղի 100-ամյակին նվիրված տոնական հանդիսությանը եւ հայրապետական պարգեւներ է շնորհել մասնաճյուղի մի քանի անդամների՝ համայնքային կյանքում իրենց գնահատարժան գործունեության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՄԷՋ

2011 Յունիս 5-ին, Կիրակի առաւօտուն, Ֆրանսայի Առնուվիլ լէ-Կոնէս հայաշունչ գաղութի Վարագայ Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ տնօրինութեամբ, թեմակալ առաջնորդ Բարձ. Տ. Նորվան Ս.

Քահանայական ձեռնադրություն

արքեպս. Զաքարեան քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը կատարեց Բրշ. Սարգիս սրկ. Բաշօ-Յովհաննէսեանի, Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին:

Յունիս 4-ի երեկոյեան, յաւարտ կիրակամուտի ժամերգութեան, Առաջնորդ Սրբազանը քահանայութեան կոչեց Սարգիս սարկաւագը: Կոչման կարգի ընթացքին ընծայեալը Սրբազան Հօր եւ ներկաներուն առջեւ նգովելով հրաժարեցաւ հերետիկոսութիւններէն, խոստովանեցաւ հաւատոյ ուղղափառ դաւանութիւնը:

Յաջորդ օրը՝ Երկրորդ Ծաղկազարդի փօնին առիթով, Նորվան արքեպիսկոպոս կատարեց իւր անդրանիկ քահանայական ձեռնադրութիւնը ի ներկայութեան հիւրաբար Ֆրանսա գտնուող Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի միաբան՝ Բարձ. Տ. Խաժակ Ս. արքեպս. Յակոբեանի, եկեղեցւոյս այցելու հովիւ՝ Արժ. Տ. Գրիգոր քհնյ. Մարտիրեանի, համայնքի սարկաւագաց եւ դպրաց դասի, երգեցիկ խումբի, ինչպէս նաեւ բազմաթիւ անդամոց ու հիւրերու:

«Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած զոլով» մաղթանքէն յետոյ ընծայեալ սարկաւագը, առընթերակայութեամբ խարտաւիլակ՝ Հոգշ. Տ. Եղիա աբեղ. Խաչատուրեանի, դասէն ծնկաչոք բեմ առաջնորդուեցաւ սաղմոսներու փոխասացութեամբ, ուր անգամ մը եւս խարտաւիլակ Հայր Սուրբը յանուն Եկեղեցւոյ պաշտօնապէս խնդրանք ներկայացուց Պատարագիչ Սրբազան Հօրը, որպէսզի Սարգիս սարկաւագը ձեռնադրուի քահանայ:

Կանոնական աղօթքներէն ետք Սարգիս սարկաւագ ձեռքերը բարձրացուց ի տես ժողովրդեան՝ ի նշան աշխարհուրացութեան, մինչ բոլոր ներկայ հոգեւորականները միասնաբար երիցս կ'երգէին «Աստուածային եւ երկնաւոր շնորհ»-ը, որուն ի պատասխան հաւատացեալ ժողովուրդը կու տար իր դրական վկայութիւնը՝ «արժանի է» ըսելով: Ապա աղօթիւք Ձեռնադրիչ Սրբազան Հայրը իր ձեռքերը դրաւ ընծայեալի գլխուն, ուսի ուրարը ձախէն աջ դարձնելով վիզէն կախեց, որով սարկաւագի ուրարը դարձաւ քահանայական փորուրար ի նշան Քրիստոսի լուծին:

Մայր Մաշտոցի սուրբգրական ընթերցումներէն յետոյ շարունակուեցաւ Ս. Պատարագը եւ հասաւ «Ողջոյն»-ի պահը: Բարձ. Տ. Նորվան արքեպիսկոպոս կանոնական աղօթքներու ընթերցումով ընծայեալին տուաւ քահանայական փիլոն, սաղաւարտ, շուրջառ եւ հուսկ՝ գօտի:

Մինչ կ'երգուէր Խաչատուր Տարօնեցիի հեղինակած «Խորհուրդ Խորին» շարականը, ընծայեալը եկեղեցւոյ խորանին ետեւը լրիւ զգեստաւորուեցաւ ու առաջնորդուեցաւ Ս. Սեղանին առջեւ: Ձեռնադրիչ Սրբազան Հայրը ընծայեալին ճակատը սրբալոյս Միւռոնաւ օծելով զայն վերակոչեց Տ. Մանուէլ Քահանայ՝ որուն աջ եւ ահեակ ձեռքերը եւս օծուեցան, մինչ հոգեւորականներն ու ժողովուրդը «Ամէն ալէլուիա» երգելով կը յայտնէին իրենց հոգեւոր ուրախութիւնը: Ապա Նորվան Սրբազանի ձեռամբ Ս. Սեղանէն Քրիստոսի կենարար Մարմինը եւ փրկչական Արիւնը պարունակող Ս. Սկիհը եւ Մաղգման յանձնուեցան նորապսակ Տ. Մանուէլ քահանային, իրաւասութիւն տալով Ս. Պատարագ մատուցանելու: Ի վերջոյ նորընծայ Քահանայ Հայրը իր անդրանիկ խաղաղութիւնը բաշխեց հաւատացեալ ժողովուրդին:

Իր քարոզին մէջ Պատարագիչ Սրբազանն անդրադարձաւ օրուայ փօնի խորհուրդին, շեշտելով քահանայական առաքելութեան կարեւորութիւնը՝ ի խնդիր եկեղեցւոյ հոգեւոր շինութեան եւ զարթօնքի:

Ողջոյնի պահուն ըստ երիցութեան կարգի բոլոր կղերականները կարգաւ համբուրեցին նորաօծ Տէր Հօր միւռոնաբոյր ճակատը, զայն շնորհաւորելով: Իսկ Ս. Պատարագի աւարտին բարեպաշտ ժողովուրդը եկեղեցւոյ բեմին առջեւ խմբուեցաւ ու աջահամբոյրով շնորհաւորեց Մանուէլ քահանան:

Ապա եկեղեցականաց թափօրը հրաւիրեալ ժողովուրդին հետ առաջնորդուեցաւ եկե-

ղեցւոյ յարակից Հրանդ Տինք հայկական դպրոցի հանդիսութեանց սրահը, ուր սարքուեցաւ Սիրոյ սեղան ի պատիւ նորոգ ձեռնադրեալ քահանայ Հօր:

Արժ. Տ. Մանուէլ քահանայ Բաշօ-Յովհաննէսեան իր քառասնօրեայ ապաշխարութեան շրջանը պիտի բոլորէ Սուրբ Էջմիածնի Մայրավանքին մէջ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հարաւային Ամերիկա կապարած Հովվապետական այցի վերադարձին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրություն է ստացել Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Ա պատրիարքից, որով պատրիարքը տեղեկացնում է, որ Վեհափառ Հայրապետի կողմից իրեն հղված դիմումնագրի հիման վրա միջնորդություն է ներկայացրել Մերձդնեստրի իշխանություններին՝ 2010թ. ձերբակալված եւ 15 տարվա ազատազրկման դատապարտված լրագրող Էռնեստ Վարդանյանի համար:

Ռուսաց պատրիարքի միջնորդության հիման վրա հայազգի լրագրողը մայիսի 6-ին ազատ է արձակվել: Այս առիթով Գարեգին Բ Կաթողիկոսը շնորհակալական նամակ է հղել Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարքին՝ եղբայրական զորակցության եւ գործադրված միջնորդական ջանքերի համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Քննիչ հանձնաժողովը, որի կազմում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (նախագահ), ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ վարդապետ Սարոյանը, հաստատեց մասնավոր վարդապետության աստիճանի համար ներկայացված Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի՝ «Հարսանեկան ծիսաշարի կանոնները եւ արարողությունները Հայոց Եկեղեցում» եւ Տ. Մակար աբեղա Հակոբյանի՝ «Եկեղեցական հարաբերություններին վերաբերող կանոնները հայ կանոնական իրավունքի հուշարձաններում» թեմաներով թեզերը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հունիսի 11-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում հոգեշնորհ Հայր Խորենն ու հոգեշնորհ Հայր Մակարը փվչության հատուկ արարողությամբ ստացան մասնավոր վարդապետության աստիճան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ «ՎԵՐՆԱՏՈՒՆ» ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հունիսի 26-ին Վիրահայոց թեմի ,Հայարտուն կենտրոնի նախաձեռնությամբ՝ ՀՀ մշակույթի նախարարության հովանավարությամբ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության օժանդակությամբ, Թբիլիսիում խորհրդարանի գրադարանի ժողովասրահում տեղի ունեցավ Վրաստանի հայ գրողների համաժողով:

Համաժողովին մասնակցեցին վրապահարնակ հայ ստեղծագործներ երկրի տարբեր շրջաններից, Սամցխե-Ջավախք, Քվեմո–Քարթլի եւ մայրաքաղաք Թբիլիսիից:

Շրջաններից համաժողովի անդամները ժամանեցին Թբիլիսի, որտեղ իրենց դիմավորեց թեմի «Հայարտուն» կենտրոնի մշակույթի բաժնի պատասխանատու Լեւոն Չիդիլյանը, միանալով մայրաքաղաքի մասնակիցներին ստեղծագործողները հյուրընկալվեցին Վիրահայոց թեմի առաջնորդարանում:

Համաժողովի անդամները այցելեցին Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների «Խոջիվանքի» պանթեոն, ծաղիկներ զետեղեցին հայ մեծերի շիրիմներին, թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստի արարողություն:

Այնուհետեւ համաժողովի անդամները այցելեցին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցի եւ մասնակցեցին աղոթքի արարողությանը, որից հետո իր շնորհաբաշխ օրհնությունը բերեց մասնակիցներին թեմի առաջնորդը:

Համաժողովը իր լավագույն մաղթանքներով բացեց Վիրահայոց թեմի առաջնորդը: Ելույթ ունեցան «Վերնատուն» միության նախագահ՝ Գեւորգ Սնիչյանը եւ միության շուրջ երեսունհինգ անդամներ:

Սրբազան Հայրը հորդորեց ստեղծել եւ ստեղծագործել ազատ եւ անկեղծ ի նպաստ հայ գիր ու գրականության պահպանության եւ մատաղ սերնդին փոխանցման:

Համաժողովը անցավ աշխատանքային մթնոլորտում: Ինչպես Սամցխե–Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի, այնպես էլ Թբիլիսիի անդամները ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքները՝ առաջ քաշեցին առկա խնդիրներն ու հարցերը: Հիմնական հարցադրումը գրքերի տպագրության խնդիրն է:

Համաժողովի ավարտին տեղի ունեցավ Անահիտ Բոստանջյանի «Նժարի Ջույգ ափերի մեջ» եւ Գեւորգ Սնիչյանի «Ընտրանիի» շնորհանդես եւ ՀՀ սփյուռքի նախարարության հովանավորությամբ՝«Վերնատուն» տարեգրքի շնորհանդեսը:

Շնորհանդեսին ներկա գտնվեցին Թբիլիսիի հասարակական եւ պետական գործիչներ, մտավորականներ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՕՆԸ ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Հունիսի 26-ին Պլովդիվի Սուրբ Գեւորգ Եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալներով: Ներկա էին Պլովդիվի տասնչորս հայկական միությունների ու կազմակերպությունների վարչականներն ու անդամները, ինչպես նաեւ մեր Սուրբ Եկեղեցւոյ հավատավոր զավակները: Պատարագիչն էր Բուլգարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանը: Իր քարոզի մեջ հոգեշնորհ Հայր Սուրբը նկարագրեց

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերը մեր հավատքի պահպանման ու տարածման գործում, ինչպես նաև մանրամասնորեն հավատացյալների ուշադրությանը հանձնեց Ս. Էջմիածնի հոգևոր արժեքն ու նշանակությունը սփյուռքահայոց կյանքում:

Պատարագից հետո կատարվեց Մաղթանք եւ հանդես Ս. Էջմիածնի:

Այնուհետեւ Հայր Սուրբը ունեցավ հանդիպում եկեղեցւոյ սրահի մեջ Պլովդիվի հայ կազմակերպությունների ու միությունների վարչությունների հետ: Ներկայացրեց Բուլգարիայի առաջնորդության ապագա ծրագրերն ու տեսլականը եւ կոչ ուղղեց ազգային կառույցներին եռանդուն մասնակցություն բերելու եկեղեցանվեր գործին, սիրո ու խաղաղության մթնոլորտում:

ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հունիսի 26-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի գլխավորությամբ Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցավ հոգեւորականների տարեկան հաշվետու ժողովը:

Ժողովն սկսվեց Տերունական աղոթքով: Սրբազան հայրը ողջունեց ժողովականներին եւ ներկայացրեց թեմի մեկ տարվա ձեռքբերումներն ու համայնքային կյանքում տեղ գտած դժվարությունները: Թեմի հոգեւոր կյանքի աշխուժացման մեջ որպես կարեւոր ձեռքբերում Սրբազան հայրը նշեց եկեղեցաշինությունը, մասնավորապես անդրադառնալով մայիսին Դոնի Ռոստովում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի ձեռամբ օծված Ս. Հարություն եկեղեցուն: Այն կառուցվել է պատմական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տեղում, որը քանդել էին համայնավարները 1965 թվականին: Սրբազան հայրը գոհանակությամբ նշեց, որ հունիսի 30-ին Ն. Ս.Օ. Տ.Տ. Գարեգին Երկրորդի ձեռամբ օծվելու է նաեւ Ռիգայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ժողովականները տեղեկացան, որ շուտով հայ հավատացյալների առջեւ իրենց դռները կբացեն Եկատերինբուրգի, Վլադիվոստոկի եկեղեցիները: Թեմական առաջնորդը տեղեկացրեց նաեւ, որ բարեհաջող շարունակվում են Մոսկվայի հայկական եկեղեցական համալիրի շինարարական աշխատանքները: Մոսկվայի Պոկլոննայա Գորայում նախատեսված Մեծ հայրենականի եւ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող «Սրբոց նահատակաց» հայկական եկեղեցու կառուցման համար քարերն Հայաստանից արդեն բերվել են:

«Թեմի հոգեւոր զարթոնքը նկատելի է ոչ միայն եկեղեցաշինության մեջ,-ասաց թեմական առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: -Մեր ծառայության գնահատականը տալիս է ժողովուրդը: Այսօր մեր եկեղեցիները լի են հավատացյալներով ոչ միայն տոն օրերին: Մարդիկ գալիս են եկեղեցի խաղաղություն եւ մխիթարություն գտնելու, քահանայի հետ խորհրդակցելու, ինչպես նաեւ մեր հոգսը կիսելու եւ աջակից լինելու նախանձախնդրությամբ»:

Սրբազան հայրը ուրախությամբ նշեց, որ թեմում ստեղծվում են նոր ծխական համայնքներ եւ արդեն կան քաղաքներ, որոնց թվում՝ Վլադիմիրը, Պերմը, Մագնիտոգորսկը,Նովոսիբիրսկը, Նիժնի Նովգորոդը, Իժեւսկը, Ռոստովը քահանաների կարքի ունեն:

Ժողովին հոգեւորականներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր համայնքի մեկ տարվա գործունեությունը: Քննարկվեցին երիտասարդաց միությունների գործունեության աշխուժացման եւ փոխշփումների կազմակերպչական հարցերը: Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանն առաջարկեց հաճախ կազմակերպել ուխտագնացություններ դեպի Սուրբ երկիր, հայ-

բենիք,Մայր Աթոռ Ս. Էջմիածին, նաեւ հանդիպումներ տարբեր համայնքների երիտասարդաց միությունների միջեւ: Եկեղեցու զորացման եւ թեմի կայացման գործում կարեւորելով քահանայի ծառայությունը՝ Սրբազան Հայրը հորդորեց հոգեւորականներին համայնքային կյանքում առավել ակտիվ լինել: «Մեր ամբողջ առաքելությունը պիտի նպատակաուղղվի վաղվա օրվան: Ոչ միայն Աստծո խոսքը պիտի փոխանցենք երիտասարդներին, այլեւ նրանց կրթենք ու դաստիարակենք քրիստոնեական ոգով ու արժեքներով, որպեսզի մեր վաղվա օրը ապահով լինի: Դրա համար շատ կարեւոր է եկեղեցու ներսում մատաղ սերնդի կրթադաստիարակչական գործը: Եթե ակտիվ ու անձանձիր գործենք, ապա կգորանա Հայ Եկեղեցին, իսկ եթե ծուլանանք, կտկարանա այն».-ասաց Սրբազան Հայրը:

Այն համայնքներում, որտեղ դեռեւս չկան կիրակնօրյա դպրոցներ, թերթեր ու ինտերնետային կայքեր, Սրբազան Հայրը հանձնարարականներ տվեց առաջիկայում ստեղծել դրանք:

Ժողովի ավարտին Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը իր հայրական օրհնությունը բաշխեց մասնակիցներին եւ հորդորեց ապրել համայնքի յուրաքանչյուր անդամի հոգսով ու ցավով, մխիթարել ու աջակից լինել հայրենիքից հեռու ապրող մեր հայրենակիցներին:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուլղարիայի քաղաքամայր Սոֆիայի առաջնորդանիստ Սուրբ Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցում պատարագեց Ռումինահայոց թեմի առաջնորդ Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանը:

Սուրբ եւ Անմահ Պատարագին ներկա էին Բուլղարիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Արսեն Սողոյանը, թեմական խորհրդի անդամները եւ Ծիսական խորհրդի վարչությունը, ազգային կազմակերպությունների ու վարչությունների ղեկավարներ:

Քարոզելիս Հոգեշնորհ Տ.Տաթեւ վարդապետը շնորհավորական խոսք հղեց Բուլղարահայոց թեմին՝ Հոգեշնորհ Տ. Արգար վրդ. Հովակիմյանի առաջնորդական պեղապահության կապակցությամբ ու փոխանցեց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու բարեմաղթանքները: Հոգեշնորհ Հայր Սուրբը հույս հայտնեց, թե Առաջնորդական տեղապահն իր ողջ ջանք ու եռանդը կներդնի, որ Առաջնորդարանի եւ թեմական կառույցի ձեւավորմամբ բուլղարահայոց կյանքում վերելքի նոր էջ բացվի՝ ի փառս Աստուծո եւ ի պայծառություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Ռումինահայոց առաջնորդ Հոգեշնորհ Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանը Վեհափառ Հայրապետի լիազորությամբ պաշտոնապես ներկայացրեց Տ. Արգար վրդ. Հովակիմյանին որպես Բուլղարահայոց թեմի առաջնորդական տեղապահ եւ հանձնեց առաջնորդական ասան/գավազանը:

Իր պատասխան խոսքում նորանշանակ առաջնորդական տեղապահը ներկաների ուշադրությանը հանձնեց Բուլղարահայոց թեմի նկատմամբ ունեցած իր տեսլականը եւ կարոտաբաղձությունը մեր միակ հոգեւոր Հայրենիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ դիտեց մեկնակետ անխուսափելի զարթոնքի համար:

Հաջորդ օրվանից սկսած Հոգեշնորհ Հայր Սուրբերն այցելություններ կատարեցին Բուլղարահայոց թեմի Պլովդիվ, Վառնա, Շումեն, Բուրգաս, Ռուսե հայաբնակ քաղաքներ՝ ամենուրեք ջերմ ընդունելության արժանանալով ու փոխանցելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունները եւ զորակցությունը:

ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ԱԲԵԼ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հունիսի 1-ի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Աբել քահանա Մանուկյանը՝ նկատի առնելով նրա կողմից շարունակվող կարգազանց անուղղա ընթացքը՝ ի հեւտեւումն Աբել քահանայի կախակայման վերաբերյալ մայիս 5, 2011 թվակիր տնօրինության:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Հրաչ Մանուկյան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ